ԵՂԲԱՑՐԱԿԱՆ ԹԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐՈՒՄ

Ն. ՄԱՌԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇ-ՕՐԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Սովետական մեծ գիտնական, ակադեմիկոս Ն. Յա. Մառի ծննդյան 85-ամյակի և մահվան 15-ամյակի նշումը Վրաստանում տևեց 1949 թվի դեկտեմբերի սկզբից մինչև 1950 թվի մարտի վերջը։

Այս ժամանակաշրջանում տեղի ունեցան մի շարք գիտական սեսիաներ և հուշ-հավաքույթներ՝ նվիրված Ն. Մառի հիշատակին, ինչպես և արձագանքներ տեղական մամուլում՝ մեծ գիտնականի կյանքի և գործունեության լուսաբանության մասին։

Թբիլիսիի Ստալինի անվան պետական համալսարանը ձեռնամուխ եղավ հրատարակելու Ն. Յա. Մառի լեզվաբանական գործերի տողվածուն վրացերեն թարգմանությամբ, որի առաջին հատորը պատրաստ է տպագրության (լույս է տեսնելու պրոֆ. Գ. Ախվլեդիանու խմբագրությամբ և տողերիս գրողի մասնակցությամբ)։

* * *

Ն. Մառի «Հուշ-օրերի» նշումը սկսվեց մեծ առաջնորդի ծննդավայր Գորիում, այն է՝ Ն. Բարաթաշվիլու անվան Գորիի Մանկավարժական Ինստիտուտի վրաց լեզվի ամբիոնի կազմակերպած սեսիայով, որը տևեց 1949 թ. դեկտեմբերի 2—3-ը։ Սեսիային ներկա էին Գորիի ինստիտուտի մանկավարժական և ուսանողական լրիվ կազմը, ինչպես և տեղական ինտելիգենցիայից գատ՝ Թբիլիսիից և Ստալինիրից (Հարավային Օսեթիայից) հրավիրված գիտ. աշխատողները, որոնց թվում և Ն. Մառի նախկին աշակերտները և հետևորդները։ Ինստիտուտի դիրեկցիայի հատուկ հրավերով, սեսիայի աշխատանքներին մասնակցեց նաև տողերիս գրողը։

Սեսիան բացվեց ինստիտուտի դիրեկտորի տեղակալ դոցենտ Ի. Գվերդծիթելու ներածական խոսքով, որից հետո հանդես եկավ վրացական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ, պրոֆ. Ակ. Շանիձեն՝ Ն. Մառի կյանքի և գործունեության բնութագրումով, նաև հիշողություններով նրա մասին։

Ապա լսվեց պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի զեկուցումը «Ն. Մառը և հնէաբանական մեթոդը» թեմայով։ Զեկուցողն աշխատեց տալ մեծ լեզվաբանի ուսմունքի վերլուծումը լեզվաստեղծման պրոցեսի միասնականության և լեզվաբանական էլեմենտների նոր ըմբռնումով։

Նույն օրը լսվեցին նաև հետևյալ զեկուցումները. պրոֆ. Մ. Զիխովանու «Ն. Մառը և սովետական ֆոլկլորիստիկան» և դոց. Ալ. Ղլոնտիի «Լեզուն և հասարակությունը սովետական լեզվաբանության լուսաբանությամբ»։

Հաջորդ օրը (դեկտեմբերի 3-ին) լսվեցին օրակարգով նախատեսված բոլոր մնացած զեկուցումները՝ պատմական գիտությունների դոկտոր Ս. Մակալաթիայի «Ն. Մառը և սովետական ագգագրության խնդիրները», դոց. Ի. Մեգրելիձեի «Արաբական այբբենը տառերի անուններով հին վրացական ձեռագրերում (Ն. Մառի արխիվից՝ Սինայի լեռան հավաքածուից)», դոց. Կ Գուգուշվիլու «Սովետական քաղաքականությունը լեզվի նկատմամբ և լեզվի նոր ուսմունքը» և դոց. Վ. Ռամիշվիլու «Վրաց լեզվի ուսուցման մեթոդիկայի խնդիրներն ըստ Ն. Մառի լեզվաբանական ուսմունքի»։

* * *

1949 թ. դեկտեմբերի 27-ին Թբիլիսիի՝ Ստալինի անվան պետական համալսարանի լեկտորիումում տեղի ունեցավ նույն համալսարանի արևելագիտության ֆակուլտետի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի հրապարակական դասախոսությունը «Ն. Մառը և հայագիտությունը» թեմայով։

* * *

1949 թ. դեկտեմբերի 29—30-ին կայացավ վրացական ՍՍՌ ԳԱ Ն. Մառի անվան ինստիտուտի 6-րդ գիտական սեսիան, նվիրված Ն. Մառի հիշատակին։ Սեսիայի դեկավարն էր նույն ինստիտուտի դիրեկտոր, վրացական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ պրոֆ. Գ. Ախվլեդիանին։

Լսվեցին հետևյալ զեկուցումները՝ ԳԱ իսկական անդամ Գ. Ախվլեդիանու «Ն. Մառի լեզվաբանական ժառանգության յուրացումը և մեր առաջիկա խնդիրները» և «Երեք հրնչյունաբանական օրենք (Մառի, Քորտանատովի և Վերների)», թղթակից անդամ Վ. Բերլիձեի «Ն. Մառը (1864—1934)», դոց. Թ. Շարաբենիձեի «Լեզվի ձևաբանական դասակարգման սկզբունքների ըմբռնման համար», դոց. Ի. Վ. Քավթարաձեի «13—18-րդ դ. դ. վրացական պատմական վավերագրերի լեզվի հրնչյունաբանական և ձևաբանական առանձնահատկությունները», պրոֆ. Ս. Ժղենտիի «Արտասանման հիմնական առանձնահատկությունները վրաց լեզվի լեռնականների խոսվածքներում», ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր Ե. Լոմթաթիձեի «Նշանագրերի կրավորական պատմության համար վրացերենում», դոց. Ալ. Մահոմետովայի «Նախադրությունները կուրաչների լեզվում», դոցենտ Վ. Վլ. Փանչվիձեի «Տրականի I-ի մի ածանցի հարցի մասին ուտիերենում», դոց. Ալ. Լեկիաշվիլու «Էլատիվի ձևի ծագման մասին արաբերենում»։

* * *

1950 թ. հունվարի 8—9-ին տեղի ունեցավ նույն ինստիտուտի սեսիան Ն. Մառի հայրենիքում՝ Գուրիայի Զոխատաուրիի շրջանում։

Սեսիան կսյացավ հունվարի 8-ին Զոխատաուրիի շրջանային կենտրոն՝ Զոխատաուրի ավանի թատրոնի շենքում։ Հանդիսավոր նիստին ներկա էին Վրացական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամներ Վ. Բերլիձեն և Ալ. Բարամիձեն, Թբիլիսիի՝ Ստալինի անվան Պետական համալսարանի պրորեկտոր պրոֆ. Ս. Ժղենտին, պրոֆ. Ս. Ղաուխչիշվիլին, Գ. Զխարտիշվիլին, Գորիի Ստալինի անվան մանկավարժական ինստիտուտների դոցենտներ Ալ. Ղլոնտին, Ի. Մեգրելիձեն և ուրիշները։ Ինստիտուտի դիրեկտորի հրավերով սեսիայի աշխատանքներին մասնակցեց «ողերիս գրողը։ Պրեզիդիումի կազմի մեջ էին նաև Գուտիայի՝ Զոխատաուրիի և Մախարաձեի (նախկին Օղուրգեթիի) շրջկոմների քարտուղարները, սոցիալիստական աշխատանքի հերոսներ Շ. Ճանուղվաձեն և Վ. Սիխարաձեն, և նաև այլ պատասխանատու աշխատողներ, տեղացի հին բոլշևիկներ։ Նիստին ներկա էին տեղական ամբողջ ինտելիգենցիան, ուսուցչությունը, նաև Ն. Մառի անվան միջնակարգ դպրոցի սանները և այլն։

Պրոֆ. Գ. Ախվլեդիանու ներածական խոսքից հետո, սեսիան լսեց հետևյալ զեկուցումները. պրոֆ. Գ. Ախվլեդիանու «Ն. Մառի լեզվաբանական ժառանգությունը», պրոֆ. Վ. Բերլիձեի «Ն. Մառ (1864—1936)», պրոֆ. Ս. Ժղենտիի «Ն. Մառի կյանքն ու գործունեությունը», պրոֆ. Ալ. Բարամիձեի «Ն. Մառը և վրաց հին գրականությունը», պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի «Ն. Մառը և հայագիտությունը» և «Ն. Մառը և Պիրենյան Գուրիան», դոց. Ի. Մեգրելիձեի «Հուշեր Ն. Մառի մասին», պրոֆ. Ս. Ղաուխչիշվիլու «Ն. Մառը և պատմագրությունը», դոց. Ալ Ղլոնտիի «Ն. Մառը 1905 թվին Գուրիայում» և դոց. Շ. Շինձիգոտիի «Ն. Մառը և վրացագիտությունը»։

Ապա ողջույնի խոսքերով հանդես եկան Զոխատաուրիի շրջկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ Ի. Գիորգաձեն, Զոխատաուրիի Ն. Մառի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Ն. Շարաձեիձեն և պիոներ աշակերտ Գ. Ռուրաշվիլին։ Ն. Մառի մասին հուշերով հանդես եկավ հին բոլշևիկ ծերունի Սեփե Ցինցուաձեն։

Հաջորդ օրը սեսիայի մասնակիցները տեղական պարտիական և սովետական զեկավար ընկերների հետ միասին, այցելեցին Ն. Մառի հայրենական տունը Գաբլացիխե գյուղում (Զոխատաուրիից 4 կիլոմետր հեռավորությամբ), ուր տեղի ունեցավ թռուցիկ միտինգ։

Միտինգը ներածական խոսքով բացեց Գաբլուաձիեի գյուղական սովետի նախագահ Գ. Օսեփաշվիլին, որից հետո ճառերով հանդես եկան պրոֆ. Գ. Ախվլեդիանին, պրոֆ. Ս. Ժղենտին, պրոֆ. Ալ. Բարամիձեն՝ դոց. Թ. Շարաձենիձեն և տեղիս՝ Ն. Մառի անվան միջնակարգ գպրոցի դիրեկտոր Գ. Բոցվաձեն։ Ն. Մառի մասին իր գրավոր հուշերը կարդաց Ն. Մառի եղբորորդին՝ շքանշանակիր ագրոնոմ, 70 տարեկան Ուժենի Մառը։

* * *

1950 թ. հունվարի 14-ին Թբիլիսիում կայացավ Վրացական ՍՍՌ ԳԱ Հասարակական գիտությունների բաժանմունքի սեսիան, նվիրված Ն. Յա Մառի հիշատակին։

Վրացական ՍՍՌ ԳԱ վիցե-պրեզիդենտ և հասարակական գիտությունների բաժանմունքի նախագահ, ԳԱ իսկական անդամ պրոֆ. Ակշանիձեի ներածական խոսքից հետո կարդացվեցին հետևյալ զեկուցումները. պրոֆ. Ա. Ժղենտիի «Ն. Մառի լեզվաբանական ժառանգության յուրացման մասին», թղթակից-անդամ Ալ. Բարամիձեի «Ն. Մառը և վրաց

հին գրականության խնդիրները», իսկական անդամ Գ. Ախվլեդիանու «Խոսունակության խանգարումը և հնչյունափոխությունը» և իսկական անդամ Գ. Զուբինաշվիլու «Ն. Մառը և նրա աշխատությունները Վրաստանի և Հայաստանի հնագիտության և արվեստի պատմության բնագավառում»։

* * *

Մարտի 24—25-ին կայացավ Թբիլիսիի Ստալինի անվան Պետական Համալսարանի Փիլոլոգիական ֆակուլտետի գիտական սեսիան՝ նվիրված Ն. Մառի հիշատակին, Փիլոլոգիական ֆակուլտետի դեկան, պրոֆ. Իլիա Աբուլաձեի ղեկավարությամբ։

Մարտի 24-ին զեկուցումներ կարդացին պրոֆ. Գ. Ախվլեդիանին «Ն. Մառի լեզվաբանական ժառանգության ստեղծագործական յուրացման խնդիրները», պրոֆ. Ա. Ժղենտին՝ «Սովետական լեզվաբանության ժամանակակից դրությունը և լեզվաբանների Մոսկվայի խորհրդակցության արդյունքները», պրոֆ. Վ. Բերիձեն՝ «Ն. Մառի կյանքն ու գործունեությունը» և պրոֆ. Ակ. Շանիձեն՝ «Հուշեր Ն. Մառի մասին»։

Մարտի 25-ի նիստին լսվեցին հետևյալ զեկուցումները. պրոֆ. Ալ. Բարամիձեն՝ «Ն. Մառը և Բալավարիանիի հարցը», Փիլոլոգիական գիտությունների դոկտոր Ռ. Լոմթաթիձեի «Ն. Մառը և կովկասյան լեզուների ուսումնասիրությունը», պրոֆ. Ս. Ղաուխչիշվիլու «Ն. Մառը և Հունաստանի հնագույն բնակչության պատմությունն ու կուլտուրան», պրոֆ. Մ. Զիքովանու «Ն. Մառը և աղգագրությունը»։

* * *

Բացի հիշյալ սեսիաներից՝ նշված զեկուցումներից մի քանիսը (պրոֆ. Ալ. Բարամիձեի, պրոֆ. Վ. Բերիձեի և այլն) կարդացվեցին նաև՝ Թբիլիսիի Ուսուցչի տանը, քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերության գծով։

Զեկուցումների մի մասը տպվեց վրացական պարբերականներում, մյուս մասը կտրպագրվի աստիճանաբար։

Սակայն Ն. Մառի հիշատակը հավերժացնելու գործում ամենանշանավոր միջոցառումն է լինելու Ն. Մառի ստուգաբանությունների բառարանը (մոտ 50 մամուլի չափ), որ կազմել է պրոֆ. Գ. Ախվլեդիանին և որի հրատարակությունը Վրացական ՍՍՌ ԳԱ Ն. Մառի անվան Լեզվի Ինստիտուտի և Թբիլիսիի՝ Ստալինի անվան Պետական Համալսարանի ամենապատվավոր քայլն է լինելու սովետական մեծ գիտնական Ն. Մառի հիշատակը վառ պահելու համար։

Լ. Մ. Բ.